ՏԱԹԵՎԻ ՈՓԱ ՔԱՐԻ ՔԱՐԱՅՐ-ԱՊԱՍՏԱՐԱՆԸ

Հ. Գ. ԱՊԻՋԲԵԿՅԱՆ

Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմություն նահանգին Սիսական» գրքի նախաբանում հիշատակվող պատմական աղբյուրների շարքում նշում է. «...և այլ ինչ ի հին նամակաց թագաւորաց Հայոց և իշխանաց Սիւնեաց, նաև ի կաթողիկոսաց Հայոց և յեպիսկոպոսաց Սիւնեաց, որ մնացեալ էին ի վաղ ժամանակաց յամուրս քարանձաւին և որ ի սուրբ ուխտս Հայրապետանոցիս Տաթևու»[1]: Պատմիչի այս տեղեկությունը հաստատում է հնուց ի վեր քարանձավները որպես ապաստարան-ամրոց և թաքստոց օգտագործելու իրողությունը. այն կարևոր տեղեկություն է նաև մի անհայտ պատմական հուշարձանի մասին. այդ ի՞նչ «յամուրս քարանձաւ» է, որտե՞ղ է գտնվում և չի՞ պարունակում արդյոք նյութեր, որոնք հետաքրքիր կարող են լինել պատմության, հնագիտության համար:



Նկ. 1

Հիշյալ տեղեկությունը մեծ հետաքրքրություն հարուցեց նաև Հայկական աշխարհագրական ընկերությանը կից քարանձավախույզների ջոկատում, որի կատարած աշխատանքների շնորհիվ հնարավոր դարձավ պատասխանել նշված հարցերին:

Պատմիչի տեղեկության համաձայն քարանձավը գտնվում է «...ի սուրբ ուխտիս Հայրապետանոցիս Տաթևու...», այսինքն Տաթևի վանքի շրջակայքում: Մեր պրպտումները հաստատեցին պատմիչի տեղեկությունը. վանքի շրջակայքում հայտնաբերվեցին մի քանի քարանձավներ, որոնցից միայն մեկն էր համապատասխանում պատմիչի «յամուրս» անվանմանը: Այն գտնվում է Տաթևի վանքից մեկ կիլոմետր հյուսիս-արևելք, Որոտան գետի աջ վտակ Աղանձուգետի (այժմ՝ Տաթև գետ) կիրճի ձախ լանջին (նկ. 1): Քարանձավը տեղադրված է Ոփա քար կոչվող, 190 մ բարձրություն ունեցող ուղղաձիգ ճակատով ժայռի միջնամասում, գետի հունից 100 մ բարձր: Այն առաջացել է կվարցացված և մարմարացված, կրաքարերի մեջ ստորգետնյա ջրերի և գետի գործունեության հետևանքով, այն ժամանակներում, երբ գետը 100 մ բարձր է եղել ներկա մակարդակից: Ուղղաձիգ ժայռի ճակատամասում գտնվող քարայրը (նկ. 2) միանգամայն անառիկ է, այնտեղ կարելի է թափանցել միայն լեռնագնացի հանդերձանքի օգնությամբ: Քարանձավի մուտքը փակված է եղել արհեստական կրաշաղախ պատով, որն ունի 50 սմ հաստություն, 24 մ ընդհանուր երկարություն, 1,5—2 մ բարձրություն. կառուցված է բաղալտի և կրաքարի մանր ու խոշոր բեկորներից: Ըստ որում, բաղալտի բեկորները բերվել են Տաթևի վանքի մոտակայքից, քանի որ տեղում տարածված են միայն

---

1 Ստեփանոս Օրբելեան. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, գլ. Ա, էջ 10 (ընդգծումը մերն է—Հ. Ա.):

կրաքարային ապարներ։ Արհեստական պատի կառուցման համար անհրաժեշտ շինանյութերը քարանձավ են բարձրացվել պարաններով։ Պատից այժմ պահպանվել են միայն 1—1,5 մ բարձրությամբ առանձին հատվածներ (աղ. I, 2)։



Նկ. 2

Քարանձավի արևելյան կողմի աջ անկյունում, ուր համեմատաբար լավ է պահպանված արհեստական պատը, տեղադրված է 50 սմ լայնությամբ մուտքը (աղ. I, 1), որը հավանաբար ունեցել է փայտե դուռ։ Արհեստական պատի անհավասարաչափ քայքայվածությունը (աղ. I, 2) ցույց է տալիս, որ այն ունեցել է նաև մեկ կամ երկու պատուհան։

Արևելյան կողմի պատի տակ շրջված վիճակում ընկած էր բաղալտե մի դարձ խաչքար (աղ. I, 1. նկ. 3), որը հավանաբար տեղադրված է եղել պատի մեջ։ Խաչքարն ունի 60 սմ երկարություն, 30 սմ լայնություն, 20 սմ հաստություն։ Խաչքարը, չնայած իր չափերին և ծանրությանը, նույնպես քարայր է տեղափոխվել ներքևից։ Այն պատրաստվել է քարայրի կառուցապատման ժամանակ, այսինքն թվագրվում է քարայրի բնակելի դարձնելու ժամանակով։

Հոգևոր անկյունների ներկայությունը երկարատև օգտագործվող քարանձավներում գրեթե պարտադիր է։ Խոշոր քարանձավային համալիրներում սովորաբար հարմարեցվում-կառուցվում էին փոքր եկեղեցիներ կամ մատուռներ՝ խորաններով և խաչքարերով։ Այդպիսի կառույցներ կան Խոսրովի անտառում, Ողջաբերդում, Սիսիանի և Նոյեմբերյանի շրջաններում գտնվող քարայր ապաստարաններում[2]։ Քարայրի մուտքից քարե աստիճանները տանում են ներքև՝ մոտ 1,5—2 մ, որտեղ կառուցված է մի փոքր հարթակ (նկ. 4)։

---

2 Հ. Գ. Ազիզբեկյան, Դ. Հ. Խոնդկարյան, Գ. Հ. Վարդանյան. Զանգեզուրի քարանձավները, 1984. գիտ. հաշվետվություն (Հայկական աշխարհագրական ընկերության ֆոնդեր)։ Նույնք՝ Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների քարանձավները, 1986. գիտ. հաշվետվություն (Հայկական աշխարհագրական ընկերության ֆոնդեր)։

Այստեղից են կախել պարանները, որոնցով միայն հնարավոր է բարձրանալ քարանձավ։ Քանի որ անձավը բնականից անառիկ է. արհեստական պատը պաշտպանական նշանակություն չի ունեցել. այն կառուցվել է միայն քարայրը բնակելի դարձնելու նպատակով՝ ցրտից, քամուց և անձրևից պաշտպանելու համար։





Աղ. I

Քարանձավի երկարությունը 15 մ է, ամենամեծ լայնությունը՝ 6 մ, բարձրությունը՝ 1,5—2 մ (նկ. 4)։ Հատակը, որի միայն արևելյան հատվածն է ծածկված հողաշերտով, անհարթ է (աղ. I, 2) և դեպի արևելք ունի 10° թեքություն։ Քարայրի գրեթե կենտրոնում, ժայռե հատակին արված է 20 սմ խորությամբ և 25 սմ տրամագծով փոս՝ հավանաբար փայտե սյունի համար։ Պատները և առաստաղն անհարթ են, առաստաղի արևելյան հատվածն ամբողջովին մրապատ է։ Քարայրի արևմտյան ծայրի հատվածը արհեստականորեն լայնացվել և ծառայեցվել է իբրև արտաքնոց (նկ. 4), որը քարայրի հատակի ընդհանուր հարթությունից ցածր է 30 սմ, ունի մոտ մեկ քառակուսի մետր մակերես։ Արտաքնոցի արտաքին պատի հատակին թողնված է 15 սմ տրամագծով դեպի դուրս ուղղված թեք անցք։

Հատակի միջամասում սյան հաստար փորված փոսը հիմք է տալիս ենթադրելու, որ քարայրում եղել են նաև օժանդակ այլ կառուցներ (փայտից միջնորմ, դարակներ, թախտ, պահարան և այլն)։

Արևելյան պատի տակ գտնվել է կրակարանը (նկ. 4), որի տեղում պահպանվել են մոխրի և փայտածուխի մնացորդներ։ Վերևում առաստաղը ծածկված է մրի շերտով։ Արևելյան հատվածի հատակը ծածկող հողաշերտի ուսումնասիրությունը հետաքրքիր արդյունքներ տվեց։ Հողաշերտն ունի 30—45 սմ ընդհանուր հաստություն և պարունակում է մեծ քանակությամբ հնագիտական նյութեր։ Այն բաժանվում է չորս ժամանակագրական շերտի։ Վերևից առաջին շերտն ունի 15—20 սմ հաստություն, մակերեսին սփռված են մեծ քանակու-



Նկ. 11



Նկ. 3

թյամբ փայտե իրերի, գործիքների (աղ. III, 1) և խեցեղենի մնացորդներ։ Հետագայում պարզվեց, որ փայտե առարկաների մեծ մասը մեղվի փեթակների մասեր են։ Բուն շերտից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ խեցեղենի, մի քանի ապակե անոթների բեկորներ, ձեռագիր և տպագիր մատյանների պատառիկներ, բրդե, բամբակե, մագե տարբեր գործվածքների ծվեններ։

Շերտում հայտնաբերված խեցեղենի բեկորներից երկուսն ունեն արձանագրություն. կարմրավուն, ոչ մեծ չափի կճուճի բեկորի վրա գրված է. «ի վայելումն Սս...» (աղ. II, 1)։ Երկրորդ բեկորը, որը համեմատաբար խոշոր և սև դույնի անոթի մաս է, ունի հետևյալ արձանագրությունը. «թվ ՌՄԼԷ (1688) ին» (աղ. II, 2)։

Հիշյալ նյութերով առաջին շերտը վերաբերում է XVII—XVIII դդ.։ Դեպի դուրս հաջորդ շերտը ունի 3—5 սմ հաստություն, կազմված է փոշուց և բուսական (հիմնականում խոտի) մնացորդներից, որոնք քարանձավ են թափանցել քամու շնորհիվ։

Այս շերտի տակ տեղադրված է 3-րդ շերտը, որն ունի 10—20 սմ հաստություն, պարունակում է մեծ քանակությամբ հնագիտական մնացորդներ, խեցեղենի բեկորներ, մագաղաթե ձեռագրերի պատառիկներ, երկաթե դամեր, ռիզ, խողի մաղից վրձին, փայտե քանդակազարդ բեկորներ, պղնձե և փայտե գդալներ (աղ. III, 2)։ Այս շերտի հորիզոնում հայտնաբերվեց նաև ձեռագիր մատյանի մի ամբողջական թերթ[3]։

---

3 Քարայրում հայտնաբերված տպագիր և ձեռագիր մատյանների բեկորները գտնվում են Մաշտոցի անվ. Մատենադարանում, № 2026։

Քարայրի հատակին, նկարագրված երրորդ շերտի տակ, հստակ սահմանազատվում է ստորին՝ չորրորդ շերտը, կազմված միայն գորշ գույնի կավից։ Այն լցվել և ամրացվել է քարայրի այդ հատվածը հարթեցնելու նպատակով։ Քարայրի արտաքին և ներքին հարդարանքը (արհեստական կրաշաղախ պատ, քարայր բարձրանալու և իջնելու նպատակով հարմարեցված հարթակ, կավով հարթեցված հատակ, արտաքնոց և այլ օժանդակ կառույցներ) թույլ են տալիս եզրակացնել, որ այն ամենայն խնամքով նախապատրաստել են օգտագործելի դարձնելու համար։



Նկարագրված երրորդ շերտը, որ գոյացել է հարթեցված կավածեփ հատակի վրա, պարունակում է առաջին քարայրաբնակների գործունեության հետքերը։ Իսկ ովքե՞ր էին առաջին քարայրաբնակները։ Ե՞րբ է կառուցապատվել քարայրը։

Տաթևի վանքի մոտ գտնվելը, ինչպես նաև Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունը քարայրի մասին (այնտեղից հանված՝ վանքին վերաբերող փաստաթղթերը) ցույց են տալիս, որ քարայրը կառուցապատվել է Տաթևի վանքի միաբանության կողմից. ըստ որում, ձեռնարկումը մեծածախս էր, ուստի կառուցապատումը կատարվել է վանքի հզորության շրջանում, սպասվող որևէ ասպատակությունից առաջ։ Նման աղետների դեպքում վանքի հարստությունները թաքցվում էին հատուկ ստեղծված գաղտնարաններում և մոտակա անառիկ բերդերում։ Ամենակարևոր՝ հոգևոր հարստությունները (սրբերի նշխարներ, սրբագործված խաչեր և այլն) հիմնականում պահվում էին վանքի ներսում ստեղծված գաղտնարաններում[4]։

---

4 Այդպիսի գաղտնարան է ունեցել նաև Շաղատի գմբեթավոր եկեղեցին, որի մասին Ստեփանոս Օրբելյանը գրել է. «Արդ, յետ բազում ժամանակաց ինչ Յովհանէս՝ կուսակրօն բահանայ և սպասաւոր սուրբ եկեղեցւոյն, առանձին աղօթս մատուցանէ, ի նմին սուրբ եկեղեցւոյն ի գիշերին։ Եւ յանկարծակի շարժումն եղև անուշահոտ բուրմամբ։ Եւ յարևելից կուսէ խորանին յեկեղեցւոյն աղիւսաձև քար վազեաց յորմոյն. և զյատակն եկեղեցւոյն էառ ի վերայ լեմին։ Եւ քահանային ելեալ ի բեմն մեծաւ երկիւղիւ տեսանէր պատուհան մի բացեալ. և ի ներքս

Տաթեի վանքի ներքին գաղտնարանը հայտնաբերվել է Տեր-Հայրապետի աթոռակալության ժամանակ, երբ վերակառուցվում էր քանդված եկեղեցին (1260—1270 թթ.). «Եւ ի սրբել զհին կազմուած աղիւսաձոյլ և վիմակարկառ





Աղ. III

դերբկացն, որ ի վերայ ձեղուանն, գտանեն ի գլուխ առաջին խորանին հիւսիսային կողման տուն գաղտանոց, և ի նմա մթերս անհուն սրբութեանց և նշխարաց առաքելական, հայրապետական և մարտիրոսական, յորում և կայր աստուածընկալ խաչն բարգենեան»[5]։ Վանական կառույցները, ներքինից բա-

յրաղում նշխարք սրբոց գրով իւրաքանչիւր անուանք եդեալ ի կողքաւի...» (Ստեփանոս Օրբելյան, գլ. ԺԲ, էջ 47)։

5 Ստեփանոս Օրբելյան, էջ 434։

ցի ունեցել էին նաև արտաքին գաղտնարաններ (վանքի տարածքում կամ ավելի հեռու), որտեղ թաքցնում էին վանքի այլ հարստությունները՝ փաստաթղթեր, ձեռագիր մատյաններ, կարասի և այլն։

Տաթևի վանքի համար նման գաղտնարան էր Ոփա քարի անմատույց քարայրը։ Այնտեղ թաքցված նյութերի մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է. «...Եւ այլ ինչ ի հին նամակաց թագաւորաց Հայոց՝ և իշխանաց Սիւնեաց, նաև ի կաթողիկոսաց Հայոց և յեպիսկոպոսաց Սիւնեաց. որ մնացեալ էին ի վաղ ժամանակաց յամուրս քարանձաւին և որ ի սուրբ ուխտս Հայրապետանոցիս Տաթևու...»[6]։

Ի՞նչ նամակներ էին դրանք, որ թաքցվել էին քարանձավում։ Նոր Հայկազեան բառարանը նամակ բառը այլ իմաստների հետ միասին բացատրում է նաև որպես հրովարտակ[7]։ Նույն իմաստով է օգտագործել այդ բառը նաև Ստեփանոս Օրբելյանը, որը երևում է Սյունյաց Տեր-Գրիգոր եպիսկոպոսի գործունեությանը վերաբերող գլխում։ Տեր-Գրիգորը (աթոռակալել է 1058—1116 թթ.), Սյունյաց թագավոր Սենեքերիմի աջակցությամբ Տաթևի վանքը հասցնում է ամենածաղկուն վիճակի։ Սրա ժամանակ կառուցվում է նոր եկեղեցի, վանքը հարստանում է Սյունիքի իշխաններից և թագավորից ստացած բազմաթիվ նոր նվիրատվություններով։ «Յետ այսր դարձեալ գայ թագաւորն ի սուրբ ուխտն առ հոգևոր Տէրն Գրիգոր, ի տես և յաղօթս։ Եւ էր գիւղն Հարժիս և Բերդկանբերչի և Ցուրայ գետ յափշտակած ի սուրբ եկեղեցւոյն, և առ ազատացն Սենեքերիմայ մեծ իշխանին Մահեւանայ և միւս աղատին Գէորռեայ. վասն որոյ ծանուցանէ եպիսկոպոսն թագաւորին զգրկանքն եկեղեցւոյն. և առաջի արկանէ զհին նամականին որ տուեալ էր առաջին թագաւորացն անխախտ պայմանաւ»[8]։ Այսինքն, Տեր-Գրիգորը թագավորին ցույց է տվել առաջին թագավորների հրովարտակները, որոնցով Հարժիս, Բերդկանբեչի գյուղերը և Ցուրայ գետը նվիրաբերվել են վանքին։

Այստեղից պարզ է դառնում նաև, որ Ստեփանոս Օրբելյանի ժամանակ քարայրից հանված «Եւ այլ ինչ հին նամակաց թագավորաց»-ը նույն այն հրովարտակներն էին, որ Տեր-Գրիգորը ցույց տվեց թագավորին, ըստ որում նշված հրովարտակները մինչև 1092 թ. դեռևս քարանձավ չէին տեղափոխվել և կարիք էլ չկար, քանի որ ժամանակները խաղաղ էին։ Սակայն շուտով անդորրը խախտվեց. 1092 թ. մեռավ սուլթան Մելիքշահը։ Սրա օրոք Սենեքերիմը մեծարվում էր արքայական պատվով։ Սուլթանի մահից հետո «ամենայն ոք գլուխ ի վեր առեալ՝ եղև անձնիշխան և զմիմեամբք ելեալ ո ոք որ կարողանայր աւերէր զերկիր զերփմամբ և յափշտակութեամբ։ ...և ելեալ ամիրայն Պարտաւայ և Ռանայ և Գանձակայ բազում զօրօք գայ ի պատերազմ ընդ Սենեքերիմայ, ...Իմացեալ զայն Սենեքերիմայ և ամրացուցեալ զամենայն աշխարհն յանառիկ ամուրսն.»[9]։ Պաշտպանության է պատրաստվում նաև Տաթևի վանքը. այս ժամանակներում էլ կառուցապատվում է քարայրը։ Վանքի հարստությունների մեծ մասը (նաև մեծ քանակությամբ ձեռագրեր) տեղափոխվում է Բաղաբերդ, որը դժբախտաբար կողոպտվում է բերդը գրավվելուց հետո[10]։

Շուտով սկսվում է ասպատակությունների և ավերման մի շրջան. 1103 թ. ընկնում է Կապան քաղաքը, մեկ տարի անց գրավվում է Որոտանը, 1105 թ.՝

[6] Նույն տեղում, էջ 10 (ընդգծումը մերն է—Հ. Ա.)։

[7] Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. II, Վենետիկ, 1837, էջ 403։

[8] Ստեփանոս Օրբելյան, էջ 328 (ընդգծումը մերն է—Հ. Ա.)։

[9] Ստեփանոս Օրբելյան, գլ. ԾԹ, էջ 320 (ընդգծումը մերն է—Հ. Ա.)։

[10] «...և զպաշտեննն ամենեցուն և զտեղի ապաստանի զանառիկ ամուրն զբաղաբերդ մատնեաց ի ձեռս Իսմայէլի անիծեալ և գիշախանձ առն, ...և ապա ի գիշերի՝ այնու արամբք գոռացաւ զբաղաբերդ. և առեալ կոտորեաց սաստիկ. և զի վասն անառիկ ամրութեանն յամենայն վանորէիցն անդ էին կուտեալ զսրբութիւնս և զգրեանս և զսպաս եկեղեցւոյ. ես առաւել՝ զանհամար և զաննման սրբութիւնս և սպաս եկեղեցւոյն Տաթևոյ՝ ...և հատակարանք յոլովք որք թուով աւելի քան զ 10000 զորս ամբարեալ էին անդ» (Նույն տեղում, գլ. ԿԱ, էջ 336)։

Րգենր. «...և ժամանակ ընդհակ եհաս զոր լեզու ոչ կարէ պատմել. և ամենե-վեր ջնջեցան մարդ և անասուն. և անբնակ եղև բոլոր աշխարհս Սիսական. միայն թէ ի ծերպս քարանց մնացեալ էին ուրեք ուրեք երկու կամ երեք այրք»[11]։ Այս աղետներից առաջ էլ (Մելիքշահի մահից հետո, 1092 թ.) կառուցապատվում է քարայրը, ամենայն հավանականությամբ 1092—1094 թթ., Տեր-Գրիգորի օրոք և, հավանաբար, նրա անմիջական ղեկավարությամբ։ Քարայրում բնակվել են մեկ կամ երկու մարդ, որոնք երկար ժամանակ պահպանել են այն, հետագայում կամ այդ պահապաններն անընդհատ փոխվել են (որը քիչ հավանական է), կամ զոհվել են աղետների ժամանակ և քարայրն ու այնտեղ թաքցված նյութերը երկար ժամանակ մոռացության են տրվել։

Քարայրի նյութերի հայտնաբերման ամենահավանական ժամանակը Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հայրապետի աթոռակալման տարիներն են (1252—1292 թթ.), երբ վերականգնվեց Տաթևը։ Նշված նյութերի հայտնաբերումից հետո քարայրը երկար ժամանակ չի օգտագործվել, այդ է վկայում 5—10 սմ հաստությամբ փոշուց և քամու բերած բուսական մնացորդներից կազմված երրորդ շերտի առկայությունը։

Քարանձավի օգտագործման հաջորդ ամենահավանական ժամանակը Դավիթ Բեկի ազգային-ազատագրական կռիվների ժամանակաշրջանն է, որից էլ քարայրում մնացել են տպագիր և ձեռագիր մատյանների պատառիկներ և 1688 թ. արձանագրությամբ խեցեղենի բեկորները։ Հողաշերտի մակերեսին եղած մեռյալի փեթակների մնացորդները և խեցեղենի որոշ բեկորներ ակներևաբար վերաբերում են XIX—XX դդ.։ Նմանօրինակ անառիկ քարայրների օգտագործումը որպես մեղվանոց տարածված էր Հայաստանի տարբեր շրջաններում՝ Իջևան, Եղեգնաձոր, Լոռի։

Իսկ այժմ մի քանի խոսք քարայրի «Ոփա քար» անվան մասին։

Ինչպես նշել ենք սկզբում, Ոփա քար անվանումը վերաբերում է ժայռին, որի միջին մասում էլ տեղադրված է քարայրը։ Իսկ քարայրը, որ լավ երևում է կիրճի տարբեր մասերից և հայտնի է տեղի բնակչությանը, հատուկ անուն չունի։ Սակայն պարզվեց, որ նշված անունը վերաբերում է հենց քարայրին։ Նոր Հայկազեան բառարանը **ոփ** *բառը բացատրում է որպես խոռոչ, ծերպ, ծակ[12] և որպես օրինակ բերում է Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցաւրեայ արարչութեան» գրքից հետևյալ հատվածը. «Ոչ զետեղակալ ջուրցն մաւրացելոց ասեմ, որ պաշարեալ ղետեղեալ զմի եւ զնոյն կայանս ունին, որ առանց գնայլից եւ առանց շարժելոյ են՝ ըստ աւրինակի* **ոփոց պաշարելոց** *որ զեռղ առեալ կան արգելեալ ի պաշարանի»[13]։ Այս օրինակը ցույց է տալիս, որ V դարում քարայր ապաստարանները (նույնիսկ պաշարված) սովորական էին ու հայտնի, և* **ոփ** *բառն էլ օգտագործված է հենց քարայր-ապաստարան իմաստով[14]։ Այստեղից էլ պարզ է դառնում, որ ժայռի Ոփա քար անվանումը վերաբերում*

---

[11] *Նույն տեղում, էջ 341։*

[12] *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. II, էջ 561։*

[13] *Բ ա ր ս ե ղ Կ ե ս ա ր ա ց ի. Յաղագս վեցաւրեայ արարչութեան, 1984, Հառ Դ., էջ 107 (ընդգծումը մերն է—Հ. Ա.)։*

[14] *Նշված ստուգաբանությունից հասկանալի է դառնում նաև կոփածո քար արտահայտությունը, որը նշանակում է ոչ թե տաշած, հարթեցրած քար, ինչպես հասկանում ենք այսօր, այլ հարթեցված և մանր խոռոչներ ունեցող քար (խոռոչները արվում են հատուկ կոփող մուրճով)։ Բազալտե կոփածո քարերով է կառուցված Մաշտոցի անվան Մատենադարանի շենքը։ Իսկ Մեծոփա վանքի անունը ստուգաբանվում է մեծ խոռոչ կամ սեծ փոս, այսինքն վանքը հավանաբար գտնվում է մեծ փոսում կամ խոռոչում։*

է հենց նկարագրված քարայր-ապաստարանին՝ հնուց իրեն բնորոշող անունով, որն էլ վկայում է քարայրի նաև ավելի վաղ ժամանակներում հայտնի և օգտագործված լինելու մասին։

Այսպիսով, ի դեմս Տաթևի վանքի Ոփա քարի, մենք ունենք իր ուրույն պատմական, հնագիտական, ազգագրական նյութերով և քարանձավային ճարտարապետությամբ հետաքրքիր միջնադարյան մի գեղեցիկ, կարևոր հուշարձան։

ПЕЩЕРА-УКРЫТИЕ ТАТЕВСКОГО ОПА КАРА

О. Г. АЗИЗБЕКЯН

Резюме

Пещера-укрытие Опа кара находится на расстоянии 1 км северо-восточнее Татевского монастыря на левом склоне ущелья правого притока р. Воротан—Агандлугета. В пещере, согласно данным Степаноса Орбеляна, в конце XIII в. были выявлены рукописи, относящиеся к Татевскому монастырю. В 1092—1094 годах, перед нашествием турок-сельджуков, в пещеру были перенесены рукописи монастыря, которые хранились в ней до восстановления Татевского монастыря в 1290 г. Выявленные при обследовании пещеры материалы показывают, что она использовалась в качестве укрытия также во время народно-освободительных войн Давид-Бека.